

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՇՈՒՇԱՆԻԿ ՎՈԼՈՂՅԱՅԻ ՏԵՐ - ԱՂԱՄՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԻ
ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԳԵՐՄԱՆԵՐԵՆՈՒՄ

Ժ. 02. 07 «Գերմանական լեզուներ» մասնագիտությամբ
բանասիրական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՍԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2014

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ քանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Յու. Ս. Գաբրիելյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ քանասիրական գիտությունների դոկտոր Ա. Յ. Ջիվանյան

քանասիրական գիտությունների թեկնածու Ն. Ա. Շաչիվյան

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2014 թ. սեպտեմբերի 10-ին ժամը 12:30-ին ՀՀ ԲՈՅ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող 009 «Օտար լեզուներ» մասնագիտական խորհրդի նիստում (Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014 թ. հուլիսի 16-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝ ք. գ. դ., պրոֆեսոր՝

Ե. Լ. Երզնկյան

Վերջին ժամանակներում ժամանակի և ժամանակայնության խնդիրը համարվում է լեզվաբանական ուսումնասիրությունների առանցքային հարցերից մեկը: Բազմաթիվ փորձեր են արվում տարբեր տեսանկյուններից ներկայացնել ժամանակի կարգի էական հատկանիշները, հիմնական դրույթները, որոնք միմյանցից տարբերվում են մոտեցումներով և տերմինաբանությամբ:

Սույն աշխատանքի *արդիականությունը* պայմանավորված է գերմանագիտության կարևորագույն խնդիրներից մեկի՝ ժամանակի կարգի ուսումնասիրության անհրաժեշտությամբ՝ ներկայացնելով այն մասնավոր տիպաբանության դիրքերից, առանձին դեպքերում ներառելով նաև մեր մայրենիի համապատասխան փաստերը: Աշխատանքն արդիական է և լեզվաբանական ուսումնասիրությունների տեսակետից առավել մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև այն առումով, որ այստեղ կիրառվում են քննարկվող երևույթների ճանաչողական և գործառական յուրահատկությունների միասնական կադապարավորման դրույթներ:

Աշխատանքի հիմնական *նպատակը* ժամանակային ձևերի մասնավոր տիպաբանական քննությունն է գերմաներենում՝ ելնելով արդի գերմանագիտության և տիպաբանության նորագույն տեսություններից ու սկզբունքներից: Սույն աշխատանքում խնդիր է դրվում.

- հնարավորինս համակողմանի ներկայացնել ժամանակի կարգի վերաբերյալ գոյություն ունեցող հիմնական տեսակետներն ու դրույթները գերմանագիտության և մասամբ նաև հայագիտության մեջ,
- ներլեզվական վերլուծության շրջանակներում քննության ենթարկել ժամանակային ձևերը, դրանց առանձին իմաստային դրսևորումները համապատասխան կառույցներում,
- ներկայացնել գերմաներենում ժամանակային ձևերի տեղակայումը ժամանակային պլաններում,
- համապատասխան պարզաբանումներ տալ գերմաներենի ժամանակային ձևերի գործառական յուրահատկությունների մասին,
- բացահայտել ժամանակային ձևերի տիպաբանական յուրահատկությունները գերմաներենում՝ ներկայացնելով հայերենի հետ ունեցած ընդհանրություններն ու տարբերությունները
- սահմանել համատեքստի, ժամանակային իմաստի հաղորդման ձևերի վրա ազդող բառային և շարահյուսական միջոցների ամբողջությունը, որոնց համադրմամբ է միայն հնարավոր ժամանակային իմաստի լիակատար դրսևորումը:

Պայմանավորված ուսումնասիրության նպատակով և խնդիրներով՝ աշխատանքում զուգակցված են լեզվի *ուսումնասիրության տարբեր մեթոդներ*՝ ինչպիսիք են նկարագրական, զուգադրական, համատեքստային և կառուցվածքային վերլուծության մեթոդները: Նշված մեթոդներից յուրաքանչյուրը լուծում է իր գլխավոր խնդիրների շրջանակը և բոլորը համագործակցում են՝ ուսումնասիրությունը դարձնելով հնարավորինս ճշգրիտ և գործող՝ ստեղծելով

առավել ճշմարիտ և լայն պատկեր ժամանակային ձևերի բարդ և բազմակողմանի հարաբերությունների վերաբերյալ:

Ուսումնասիրության **գիտական նորույթը** գերմաներենում ժամանակային փոխհարաբերության խնդիրների համալիր քննությունն է ճանաչողական և իմաստագործառական տեսանկյունից, դրանց գործառության ինտրափոփոխությունների բացահայտումը՝ ըստ արդի գերմանագիտության մեջ առաջարկվող դրվածքային և ժամանակաձևային իրացման միասնական կադապարի¹: Աշխատանքում նորույթ է նաև ժամանակակից տիպաբանական քննության հարցաթերթային և չափանմուշային սկզբունքների զուգակցումը: Ընդ որում, համապարփակ քննության նպատակով որպես չափանմուշ - լեզու ընտրված է գերմաներենը և գործնական նպատակադրումներից ելնելով՝ ժամանակակից գերմաներենի ժամանակի կարգի տիպաբանական առանձնահատկությունները ներկայացվում են նաև հայերենի համապատասխան լեզվական իրողությունների մասնակի զուգադրմամբ:

Համապատասխան լեզվական նմուշների քննությունը գերմաներենում տարվում է համատեքստային վերլուծության պայմաններում, ինչը թույլ է տալիս առավել համակողմանի բացահայտել տվյալ միավորի տեղը և դերը լեզվական համակարգում:

Տեսական առումով ուսումնասիրությունը կարող է նպաստել գերմաներենում ժամանակի և ժամանակայնության հետ կապված շատ խնդիրների նորովի լուսաբանմանը, ինչպես նաև գերմաներենում ժամանակային ձևերի առանձնահատկությունների տիպաբանական քննությանը: Կարևորագույն խնդիրը, որ լուծում է տվյալ ուսումնասիրությունը և դրանով իսկ ձեռք բերում տեսական արժեք գերմանագիտության համար, գերմաներենում ժամանակի կարգի վերաբերյալ այնպիսի տիպաբանական յուրահատկությունների սահմանումն է, որն առանձին դեպքերում հնարավոր է միայն հայերենի փաստերին զուգադրելիս:

Գործնական առումով սույն հետազոտությունը կիրառության լայն հնարավորություն ունի: Աշխատանքում ձեռք բերված արդյունքները կարող են գործադրվել գերմաներենի գործնական ուսուցման մեջ, գերմաներենի տիպաբանության, ինչպես նաև գերմաներենի և հայերենի զուգադրական քերականության դասընթացներում, թարգմանաբանական խնդիրների պարզաբանման նպատակով:

Աշխատանքն իր մեջ ներառում է ներածություն, 3 գլուխներ, եզրակացություն (143 էջ ընդհանուր ծավալով): Աշխատանքի վերջում ներկայացված են օգտագործված գիտական և գեղարվեստական գրականության, ինչպես նաև բառարանների ցանկերը, ծանոթագրությունները:

¹ Գաբրիելյան Յու. *Գերմաներեն լեզվի տիպաբանություն*, Երևան, ԵՊՀ հր., 2006, էջ 56:

Ներածության մեջ պարզաբանվում է թեմայի ուսումնասիրվածության աստիճանը, հիմնավորվում է հետազոտության արդիականությունը, ներկայացվում են վերջինիս նպատակն ու խնդիրները, ընդգծվում է գիտական նորույթը և գիտագործնական նշանակությունը, նյութի վերլուծության ընթացքում գործադրված մոտեցումներն ու մեթոդները:

Առաջին գլուխն («Ժամանակի քերականական կարգի լեզվաբանական ըմբռնումները գերմանագիտության և հայագիտության մեջ») ընդգրկում է սույն աշխատանքի վերաբերյալ տեսական հիմնարար դրույթների վերլուծություն: Ներկայացվում են գերմաներենում սահմանական եղանակի ժամանակային ձևերը, դրանց տեղակայման առանձնահատկությունները երկու ժամանակային պլաններում՝ բացարձակ և հարաբերական: Իմաստաբանական վերլուծության են ենթարկվում հիշյալ ժամանակաձևերը, ցույց է տրվում դրանց իրացման հնարավորությունները:

Բացի այդ, անդրադարձ է կատարվում նաև հայերենում ժամանակի կարգի յուրահատկություններին, տեսական այն արժևորումներին, որ ստանում է նշված քերականական կարգն այս լեզվում:

Սույն աշխատության մեջ որպես տեսական հիմք ընդունում ենք Յու. Գաբրիելյանի կողմից առաջարկվող դասակարգումը, որը գերմաներենի ժամանակային համակարգին առնչվող հիմնական խնդիրների յուրովի մեկնաբանություն է: Հիշյալ տեսության հիմնական դրույթների վերլուծությունը թույլ է տալիս սահմանել գերմաներենում ժամանակային ձևերի այնպիսի առանձնահատկություններ, որոնց հիման վրա ժամանակաձևերը տեղակայվում են երեք ժամանակային տարածություններում՝ անցյալ, ներկա, ապառնի, ինչպես նաև երկու ժամանակային պլաններում՝ բացարձակ, որտեղ նկատի է առնվում գործողության և խոսքի պահի փոխհարաբերությունը և հարաբերական, երբ նկատի է առնվում գործողության պահի փոխհարաբերությունը մեկ այլ գործողության պահի նկատմամբ, ինչը նաև համապատասխանում է Վ. Ադմոնիի կողմից առաջարկվող բացարձակ և հարաբերական դասակարգման հիմնական դրույթներին²: Բացարձակ և հարաբերական ժամանակային ձևերի գաղափարը հետագայում զարգացվում է Գ. Յիֆոնունի կողմից: Գերմաներենի ժամանակային համակարգում հեղինակը տարբերում է պարզ և բաղադրյալ ժամանակաձևեր (einfache und kompositionale Tempora): Ըստ այդ դասակարգման՝ պարզ ժամանակաձևեր են առաջին ապառնի (Futurum I), ներկա (Präsens), անցյալ կատարյալ, անցյալ անկատար (Präteritum) ձևերը: Բաղադրյալ ժամանակաձևեր են վաղակատար ներկա (Perfekt/Präsensperfekt), վաղակատար անցյալ (Plusquamperfekt / Präteritumsperfekt), երկրորդ ապառնի (Futurum II / Futurperfekt) ժամանակային ձևերը³:

² Admoni W. *Der deutsche Sprachbau*. München, Beck, 1982, S. 185.

³ Hentschel E., Weydt H. *Handbuch der deutschen Grammatik*. Berlin, de Gruyter, 2003, S. 97.

ժամանակային ձևերի այսպիսի դասակարգումը կարող է կիրառելի լինել ինչպես գերմաներենի, այնպես էլ հայերենի համար:

Այսպիսով, գերմաներենում բացարձակ ժամանակային պլանին են պատկանում ներկան (Präsens) և առաջին ապառնին (Futurum I)՝ ըստ համընկնող (Gegenwart) և հաջորդող (Zukunft) դրվածքների և անցյալ կատարյալն (Präteritum) ու վաղակատար ներկան (Perfekt)՝ ըստ նախորդող (Vergangenheit) դրվածքի: Երկրորդ խմբում նույն կերպ տեղաբաշխվում են հարաբերական ձևերը. երկրորդ ապառնին (Futurum II), վաղակատար անցյալը (Plusquamperfekt) և վաղակատար ներկան, որը հանդես է գալիս երկու ժամանակային պլաններում միաժամանակ: Ըստ այդ դասակարգման՝ բացարձակ ժամանակային պլանն ընդգրկում է երեք դրվածքի ձևեր՝ համընկնող, հաջորդող, նախորդող (նախորդող դրվածքի երկու ձևեր), մինչդեռ հարաբերականի դեպքում բոլոր երեք ձևերը ներկայացված են մեկ դրվածքով:

Երկրորդ գլխում («Բացարձակ ժամանակային ձևերի տիպաբանական յուրահատկությունները գերմաներենում») քննարկվում են գերմաներենում բացարձակ ժամանակային պլանում տեղակայված ներկա (Präsens), առաջին ապառնի (Futurum I), անցյալ կատարյալ, անցյալ անկատար (Präteritum), վաղակատար ներկա (Perfekt) ժամանակային ձևերին վերաբերող ընդհանուր դրույթներ: Առանձին ենթագլուխներում տրվում է գերմաներենում սույն ձևերի վերաբերյալ առավել համակողմանի նկարագրություն, տեսական և գործնական վերլուծություններ:

Երկրորդ գլխի առաջին ենթագլխում («Ներկա (Präsens)») քննության են ենթարկվում ներկա ժամանակային ձևերի տիպաբանական յուրահատկությունները, դրանց կիրառության հնարավորությունները գերմաներենում (նաև հայերենում): Սույն ձևերի տիպաբանական վերլուծության հիմնական դրույթները թույլ են տալիս գերմաներենի և հայերենի համար փաստել նույն գործառույթը. ներկա ժամանակը հիմնական կիրառությամբ նշում է խոսելու պահին համընթաց, հարածիզ գործողություն: Սակայն ներկայի ձևերի իմաստային և գործառույթային դրսևորումների ուսումնասիրությունը բացահայտում է հիշյալ ձևերի համար այնպիսի գործառույթներ, որոնք ոչ մի կերպ չեն համապատասխանում այդպիսի բնորոշմանը: Ժամանակային անսահմանափակության պատճառով ներկայի ձևերը կարող են հաղորդել կետայինից⁴ (*Es regnet. Անձրևում է:*) մինչև հարածամանակային գործողության գաղափար (*Die Erde dreht sich um die Sonne. Երկիրը պտտվում է արեգակի շուրջը:*):

⁴ Կետային ներկայի “Punktuell Präsens” որպես ներկա ժամանակի առանձին գործառույթի գաղափարը գերմանագիտության մեջ առաջարկում է Օ. Մոսկալսկայան, ապա նաև՝ Վ. Բյոտխերը: Տե՛ս Moskalskaja O. *Grammatik der Deutschen Gegenwartssprache*. Moskau, Hochschule, 1975, S. 85; Boettcher W. *Grammatik verstehen*. Tübingen, Niemeyer, 2009, S. 49. Հայագիտության մեջ “կետային ներկա” եզրույթը ներմուծվում է Ա. Հովհաննիսյանի կողմից: Տե՛ս Հովհաննիսյան Ա. *Հայերենի և անգլերենի ժամանակային ձևերի զուգադրական վերլուծություն*, Երևան, Արտագերս, 1999, էջ 16:

Ներկայի կիրառության հնարավորություններն առավել պարզ դրսևորվում են խոսքային իրավիճակներում:

Ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ ներկայի ձևերը կարող են հանդես գալ ընդհանրական, պարբերական, բնութագրող, կետային, պատմական, հաստատական, ապառնեական, հրամայական գործառույթներով՝ կազմելով ներկայի իմաստագործառական դաշտը:

Ոճական տեսակետից առավել մեծ հետաքրքրություն են ներկայացնում ներկայի պատմական (Historisches Präsens) և ապառնեական երկրորդային իրացումները: Պատմական գործառույթի դեպքում ներկայի համար առաջնային համարվող խոսքի պահին համընթացության առաջնային իմակը մղվում է հետին պլան, և երկրորդային իմակը, որը ենթադրում է ներկայի սահմանների տարածում անցյալի և ապառնիի վրա, դառնում է հիմնական - առաջնային: Ե՛վ պատմական, և՛ ապառնի իմաստները հիմնված են ժամանակային փոխանցման երևույթի վրա: Ներկայի ձևերը պատմական և ապառնի գործառույթներով փոխանցվում են անցյալի և ապառնիի ժամանակային ոլորտներ: Ներկայի՝ անցյալի ոլորտ փոխանցման պարագայում չեզոքացվում է ներկա - անցյալ կատարյալ, անցյալ անկատար (Präteritum) և ներկա - վաղակատար ներկա (Präsens - Perfekt) հակադրությունները, և ներկան հանդես է գալիս որպես անցյալ կատարյալի, անցյալ անկատարի (Präteritum), վաղակատար ներկայի հոմանիշ: Այսպիսի փոխանցումը, սակայն, ենթադրում է որոշակի ոճական նպատակներ: Փոխանցման ոճական ազդեցությունն այն է, որ փոխադրված քերականությամբ իր հիմնական իմաստը լրիվ չի կորցնում, այլ ձեռք է բերում որոշակի ոճական երանգավորում՝ ներկայացնելով անցյալի գործողությունն ավելի կենդանի ու տպավորիչ: Այն առավել հաճախ կիրառելի է պատմողական բնույթի շարադրանքներում, ինչպես, օրինակ՝

Im 1450 erfindet Guttenberg den Buchdruck (Boettcher, 2009:50).

1450 թ. Գուտենբերգը հայտնաբերում է գրատպությունը:

Ներկայի ձևերի ապառնի կիրառության դեպքում ոճական հնարավորություններն ավելի համեստ են, քան պատմականի դեպքում: Այս պարագայում ևս գործում է ժամանակային փոխանցման երևույթը՝ չեզոքացնելով ներկա - ապառնի հակադրությունը: Ներկայի ձևերն ապառնի գործառույթով մշում են մոտ ապագայում կատարվելիք գործողության իմաստ: Այսպիսի դեպքերում ցանկալի են դառնում ժամանակային ցուցիչները, որոնք հստակեցնում են ապառնի իմաստը.

Morgen graut in einigen Stunden, da ist sie bereit (Berens-T., 1949:222).

Լուսանում է մի քանի ժամից, ահա նա պատրաստ է:

Եթե ներկայի նախորդ գործառույթների դեպքում խոսվում էր քերականական չեզոքացման մասին, ապա ներկայի ձևերի *հրամայական* գործածության դեպքում արդեն խոսվում է այս ձևերի՝ այլ եղանակային ոլորտ փոխանցման մասին: Սահմանական եղանակի ներկայի ձևերը, փոխանցվելով

հրամայականի ոլորտ, հանդես են գալիս հրամայական իմաստով: Ասվածը վերաբերում է ինչպես գերմաներենին, այնպես էլ հայերենին.

“Sie können gehen, Leutnant”, sagte der General (Moskalskaja, 1975:95).

«Ռուք կարող եք զնալ, լեյտենանտ»,- ասաց զեներալը:

Այսպիսով, ներկան կարող է լինել բուն ներկա կամ տևական, բնութագրական և կամ ժամանակից անկախ: «Այս բոլորը», ինչպես նշում է Յ. Աճառյանը, «ցույց են տալիս, որ ժամանակի գաղափարը խախտու է, և նրանք հաճախ կարող են իրար տեղ գործածվել»⁵:

Երկրորդ գլխի երկրորդ ենթազույգը («Առաջին ապառնի (Futurum I)») ներկայացնում է առաջին ապառնի ժամանակային ձևերի տիպաբանական առանձնահատկությունների համալիր քննություն: Առաջին ապառնի ժամանակածևր, տեղակայվելով հիշյալ ժամանակային պլանում՝ ըստ հաջորդող դրվածքի, հանդես է գալիս որպես ապառնի իմաստի հաղորդման հիմնական հարացուցային ժամանակածևր:

Ի տարբերություն, սակայն, իմաստային դաշտում տեղակայված ներկա և անցյալ ժամանակային ձևերի՝ դրանց արտահայտած գործողությունը երբեք հասանելի և տեսանելի չէ, այն կարող է ընկալվել որպես զուտ մտադրություն, նախատեսված, սպասված իրողություն կամ եղելություն: Գերմաներենում, ինչպես նաև հայերենում, ապառնիի եզրում տեղակայված ձևերը նշում են բովանդակային պլանում ժամանակային և եղանակային իմաստներ: Ապառնիի դեպքում ժամանակի և եղանակի միջև սահմանը հասցվում է նվազագույնի: Ապառնին միանշանակ ժամանակային է համարվում այնպիսի արտահայտություններում, ինչպես, օրինակ՝ ***Im nächsten Jahr wird sie nicht mehr arbeiten.*** Մինչդեռ հաջորդ օրինակում ապառնիով արտահայտված գործողությունը կարելի է միանշանակ դիտարկել որպես եղանակային. ***Peter wird schon längst in Köln sein.*** Այս հանգամանքը, սակայն, քերականության մեջ տարբեր կերպ է մեկնաբանվում: Գ. Յելբիգը և Յ. Բուշան գերմաներենի բայի համար ընդունում են ապառնիի երկու տարբերակներ. մի դեպքում դա ներկայում ենթադրվող գործողության իմաստի հաղորդումն է, մյուս դեպքում՝ ապառնի գործողության⁶: Սակայն ապառնիի համար այսպիսի տարբերակված գործառնություններից զատ, անհրաժեշտ է տալ միասնական սահմանում, որը կներառեր երկու բաղադրիչները միաժամանակ՝ ժամանակային և եղանակային:

Այսպիսով, առաջին ապառնի ձևերի հիմնական իմաստը գործողության հաղորդումն է, որը տեղակայվում է խոսելու պահից հետո: Գործառնության տեսա-

⁵ Աճառյան Յ. *Լիակատար քերականություն հայոց լեզվի*, հատ. 4, գիրք Ա, Երևան, ՅՍՍՀ ՊԱ, 1959, էջ 48:

⁶ Helbig G., Buscha J. *Deutsche Grammatik. Ein Handbuch für den Auslandsunterricht.* 19. Aufl., Leipzig, Langenscheidt, 2001, S. 137

կետից, սակայն, առաջին ապառնին գերմաներենում օտոված է մի շարք տիպաբանական յուրահատկություններով:

Քննության արդյունքում ապառնիի համար առանձնացվել են իրացման հետևյալ տարբերակները՝ կանխադրությային կամ ենթադրական ապառնի, մտադրության ապառնի, համոզմունքի ապառնի, հարցման ապառնի, հրամանի ապառնի, ընդհանրական ապառնի:

Երրորդ ենթագույխը («Անցյալ կատարյալ և անցյալ անկատար (Präteritum)») ներառում է Präteritum⁷ (անցյալ կատարյալ, անցյալ անկատար) ժամանակային ձևերի քննություն: Բացարձակ ժամանակային պլանում Präteritum-ով հաղորդվող գործողությունը դիտվում է որպես զուտ անցյալի իրողություն՝ խզելով կապը ներկայի հետ և վերաբերելով բացառապես անցյալի ոլորտին⁸: Որպես բացարձակ ժամանակային ձև՝ Präteritum-ի համար որպես հաշվարկման կենտրոն ընդունելի է խոսքի պահը: Այն հանդես է գալիս խոսքի պահին նախորդող դրվածքի դրսևորմամբ: Ընդ որում, այս դեպքում առկա է խոսքի պահի և գործողության կատարման պահի լիակատար անհամապատասխանություն: Ավելին, այն նշում է որոշակի հեռավորություն խոսքի պահի և գործողության կատարման ժամանակի միջև: Գերմաներենում Präteritum ժամանակային ձևը հանդես է գալիս հայերենում ժամանակային երկու ձևերի համարժեք՝ անցյալ կատարյալ և անցյալ անկատար: Եթե հայերենում անկատարի և կատարյալի համար առկա են հարաբերականորեն առավել կոնկրետ արտահայտման կաղապարներ, ապա գերմաներենում տվյալ քերականական երևույթն առավել աղոտ է ուրվագծված: Առաջնային իմաստով այս ժամանակային ձևերը գերմաներենում նշում են անմիջականորեն անցյալում կատարված կամ կատարվող գործողություն: Ընդ որում, Präteritum ժամանակային ձևով կազմությունները գերմաներենում կարող են դրսևորել երկիմաստություն, ինչպես, օրինակ՝

Als ich ankam, kochte sie Kaffee.

Այս նախադասությունը հայերեն թարգմանելիս կարող է ունենալ երկու համարժեք տարբերակներ՝ դրսևորելով տարբեր կերպային արժեքներ.

(ա) Երբ ես ներս մտա, նա սուրճ էր եփում:

(ա') Երբ ես ներս մտա, նա սուրճ եփեց:

Հայերեն առաջին տարբերակում արտահայտվում է գործողություն, որը մեկ այլ գործողության կատարվելու պահին արդեն ընթացքի մեջ էր: Ընթացականությունն այս դեպքում արտահայտվում է միևնույն նախադասության մեջ անցյալ կատարյալ և անցյալ անկատար բայաձևերի համադրմամբ: Մինչդեռ

⁷ Գերմաներենի Präteritum եզրույթը նպատակահարմար ենք գտնում չփոխարինել հայերենի անցյալ կատարյալ և անցյալ անկատար ժամանակաձևերով, քանի որ այն չի դրսևորում բացարձակ համարժեքություն հիշյալ ձևերի հետ՝ հանդես գալով մեկ որպես անցյալ կատարյալ, մեկ որպես անցյալ անկատար ձևերի համարժեք:

⁸ Գաբրիելյան Յու. *Գերմաներեն լեզվի տիպաբանություն*, Երևան, ԵՊՀ հրատ., 2006, էջ 58:

երկրորդ նախադասության երկու մասերում էլ նշվում է կատարված գործողության գաղափար: Հայերեն տարբերակներում գործ ունենք մի դեպքում՝ անկատար, մյուս դեպքում՝ կատարյալ կերպիմաստային դրսևորման հետ, ինչը, սակայն, գերմաներենում հստակ չէ: Դա հնարավոր է որոշակիացնել բացառապես բառային ցուցիչներով.

Als ich ankam, kochte sie gerade Kaffee.

Երբ ես ներս մտա, նա հենց այդ ժամանակ սուրճ էր եփում:

Als ich ankam, kochte sie sofort Kaffee.

Երբ ես ներս մտա, նա անմիջապես սուրճ եփեց:

Այսպիսով, բերված օրինակներից պարզ է դառնում, որ անցյալի այս ձևերի համար գերմաներենում անկատար - կատարյալ հակադրությունն առարկայանում է միայն բառային առկայացուցիչների միջոցով:

Հիշյալ ձևերի համար գերմաներենում առանձնացվել են պատմողական, կետային, պարբերական, բնութագրական, տևական, ընդհանրական, ապառնեական կիրառության տարբերակներ, որոնք հիմնականում համարժեք դրսևորումներ են գտնում նաև հայերենում:

Եթե Präteritum-ի՝ վերը նշված գործառնությունների դեպքում ներկայացվում են տևական, պարբերական, բնութագրող, ընդհանրական, կետային իմաստներ՝ վերցված անցյալի հարաբերությամբ, ապա ապառնի կիրառության դեպքում չեզոքացվում է բուն անցյալի հարացուցային նշանակությունը՝ փոխանցվելով այլ ժամանակային ոլորտ: Präteritum ձևերի իմաստային դրսևորումների քննությունը չի կարող սահմանափակվել զուտ տվյալ ձևերի համար կիրառության հնարավոր տարբերակների թվարկմամբ: Այսպիսի բազմազան կիրառության հնարավորությունները բացահայտում են անցյալի ձևերի իմաստային հարուստ ներուժը, որը թույլ է տալիս տվյալ ձևերին ծավալվել անցյալի ոլորտում դեպի ներկայի, ապա նաև՝ դեպի ապառնիի ժամանակային ոլորտներ, ինչպես՝

Hans wusste, dass die Ferien bald zu Ende waren (Thieroff, 118).

Հանսը գիտեր, որ շուտով արձակուրդներն ավարտվում էին:

Այս դեպքում տեղի է ունենում Präteritum ժամանակային ձևերի փոխանցում մեկ այլ ժամանակային ոլորտ՝ ապառնի ժամանակի ոլորտ: Այսպիսի իրացմամբ հիշյալ ձևերը չեն նշում ապառնի գործողություն՝ վերցված անցյալի հարաբերությամբ, այլ նշում են անցյալ ժամանակակետում՝ մեկ այլ անցյալ ժամանակակետի նկատմամբ կատարվելիք գործողություն: Ապառնի իմաստի դրսևորումը հիշյալ ձևերով հնարավոր է այն դեպքում, երբ առկա է անցյալի ոլորտում տեղակայված գործողության, ենթադրության սպասողական վիճակ: Սույն ձևերի այսպիսի գործառնության խոսքում հնարավոր է միայն ժամանակի մակբայների համադրությամբ: Այս պարագայում, անշուշտ, կարելի էր վերցվում է նաև համապատասխան համատեքստի առկայությունը, ինչպես՝

Morgen kamen ihre Eltern zu Besuch (Thieroff, 1992:118).

Վաղը նրա ծնողներն այցելության էին գալիս նրան:

Քերականության տեսակետից, սակայն, այս նախադասությունը չի կարելի միանշանակ մեկնաբանել, այն կարելի է ճիշտ համարել միայն որոշակի համատեքստի պայմաններում.

Am 6. April wurde Anna früh wach. Sie hatte viel zu tun, denn morgen kamen ihre Eltern zu Besuch (Thieroff, 1992:118).

Ապրիլի վեցին Աննան վաղ արթնացավ: Նա շատ անելու բան ուներ, քանի որ վաղը նրա ծնողներն այցելության էին գալիս նրան:

Ինչպես արդեն պարզ դարձավ, այս պարագայում համատեքստը դառնում է որոշիչ տվյալ իմաստի դրսևորման համար: Այն թույլ է տալիս քերականական տեսակետից ոչ ճիշտ նախադասությունը դարձնել ընկալելի՝ ելևելով ոճական նկատառումներից:

Ինչպես ցույց տվեց համապատասխան օրինակների վերլուծությունը, անցյալի ձևերի ապառնի իրացումները խոսքում պահանջում են որոշակի պայմաններ՝ համապատասխան համատեքստ և բառային միջոցներ, որոնց շնորհիվ է միայն հնարավոր դառնում տվյալ իմաստի դրսևորումը:

Այսպիսով, գերմաներենի Präteritum ժամանակային ձևերի ուսումնասիրությունը բացահայտում է Präteritum-ի՝ որպես զուտ անցյալի հաղորդման բացարձակ ժամանակային ձևի կիրառության հնարավորությունները խոսքում: Ժամանակային այս ոլորտում առկա են մի շարք անհամապատասխանություններ երկու լեզուներում: Գերմաներենում, ի տարբերություն հայերենի, այս ձևերը չեն ստեղծում ոչ՝ ժամանակային, ոչ՝ էլ կերպային հակադրություն, քանզի հակադրության առաջին և զլխավոր պայմանը հակադրության երկու կամ ավել անդամների առկայությունն է, որոնք հակադրվում են՝ հիմքում ունենալով որևէ տարբերակիչ հատկանիշ: Ուստի, գերմաներենում Präteritum ժամանակային ձևերի արտահայտած կատարյալ - անկատար կերպային դրսևորումների ողջ ծանրությունը կրում են համատեքստը և բառային միջոցները: Փաստորեն, այս պարագայում ձևաբանական մակարդակի երևույթի քննությունը տեղափոխվում է շարահյուսական մակարդակ բայական քերականական կարգի դրսևորումները շարակարգային առանցքում քննելու նպատակով, քանի որ գերմաներենի քերականական միջոցներն այս առումով սահմանափակ են և թույլ չեն տալիս ձևաբանական մակարդակի երևույթը լիովին բացահայտել ձևաբանական հարթությունում:

Այսպիսով, զուգադրական քննության արդյունքները թույլ են տալիս գերմաներենի Präteritum-ի և հայերենի անցյալ կատարյալի համար սահմանել ընդհանուր հատկանիշներ: Այս ձևերի առանձին իմաստային բաղադրիչների վերլուծությամբ կունենանք հետևյալ պատկերը. գործողության բացառում խոսքի պահից, նախորդող դրվածք խոսքի պահի նկատմամբ և հեռավորություն նշված գործողության և խոսքի պահի միջև:

Չորրորդ ենթագլխում («Վաղակատար ներկա») հատուկ անդրադարձ է կատարվում վաղակատար ներկայի բացարձակ ժամանակային բնույթին: Առանձին քննության են ենթարկվում վաղակատարի կիրառության հնարավոր-

րութունները բացարձակ ժամանակային պլանում: Այսպիսի իրացմամբ վաղակատարը հանդես է գալիս որպես Präteritum-ի հոմանիշ ժամանակային ձև: Հիշյալ ժամանակաձևերը բայի հարացույցում չեն կազմում հակադրություն, դրանց միջև տարբերակիչ կարգային նշանակություն գոյություն չունի: Հ. Գլինցն այս երկու ժամանակաձևերն անվանում է «մեկ իմաստի մրցակիցներ»⁹: Վաղակատար ներկա (Perfekt) և անցյալ կատարյալ (Präteritum) ժամանակաձևերը անցյալի ձևեր են և կարող են կիրառվել բացարձակ ժամանակային պլանում և տվյալ ձևերի միջև գոյանում է իմաստային ու գործառնության հոմանիշություն, սակայն, ի տարբերություն անցյալ կատարյալի (Präteritum), վաղակատար ներկան արտահայտում է այնպիսի գործողություն, որը մեկուսացնում է նշված գործողությունը:

Որպես բացարձակ ժամանակային ձև՝ այն նշում է խոսքի պահին նախորդող գործողության գաղափար, որը չի հարաբերում անցյալի այլ գործողությունների հետ: Այդ պատճառով բացարձակ ժամանակային կիրառությամբ վաղակատար ներկան (Perfekt) և անցյալ կատարյալը (Präteritum) դիտվում են որպես անցյալի արտահայտման հոմանիշ ձևեր, որոնք նշում են որոշակի ոճական տարբերություններ: Հիշյալ ձևերի միջև գործառնության տարբերությունները պայմանավորված են դրանց իմաստաբանությամբ:

Անցյալի գործողությունները բացարձակ վաղակատարի (Perfekt) միջոցով կարող են ընկալվել որպես ամբողջություն՝ չնշելով անցյալի գործողությունների միջև որևէ կապ կամ հարաբերություն, ինչպես՝

In 1812 hat Napoleon ganz Europa erobert (Rödel, 66)

1812թ. Նապոլեոնը նվաճել է ամբողջ Եվրոպան:

Վաղակատար ներկայի (Perfekt) և Präteritum-ի հոմանիշությունը, սակայն, ունի որոշակի սահմանափակումներ: Յուրաքանչյուր վաղակատար ներկա (Perfekt) ժամանակաձև կարող է անցյալ կատարյալի (Präteritum) փոխարեն գործածվել, երբ խոսքը վերաբերում է այնպիսի փոփոխություններին, որոնք կրում են ոճական բնույթ, ինչպես, օրինակ՝ *Schiller schrieb “Die Räuber” im Jahre 1781*. Նախադասության մեջ անցյալ կատարյալ (Präteritum) ժամանակային ձևը կարելի է փոխարինել վաղակատարով (Perfekt), ինչպես՝ *Schiller hat “Die Räuber” im Jahre 1781 geschrieben*. Սակայն ոչ միշտ է հնարավոր վաղակատարը (Perfekt) փոխարինել անցյալ կատարյալով (Präteritum): Այսինքն՝ սույն ձևերը ոչ միշտ են կարող հանդես գալ միմյանց փոխարեն, հատկապես երբ խոսքը վերաբերում է վաղակատար ներկա ժամանակաձևերի այնպիսի կիրառությանը, երբ գործողությունը ենթադրում է ներկայի առնչություն, ինչպես՝ *Guck mal, es hat geschneit*. Նախադասության մեջ վաղակատարը (Perfekt) չի կարող փոխարինվել անցյալ կատարյալ (Präteritum) ժամանակային ձևով (*Guck mal, es schneite.*):

⁹ Glinz H. *Die innere Form des Deutschen*. Bern, München, Franke Verlag, 1962, S. 103

Վաղակատար ներկա (Perfekt) ժամանակաձևի ձևաբանական և շարահյուսական վերլուծությամբ բացահայտվում է հիշյալ ձևերի կիրառության հնարավորությունները, որոնք բացարձակ ժամանակային պլանում բավականաչափ սահմանափակ են: Այն ամբողջ ներուժով ծավալվում է հարաբերական պլանում՝ այլ ժամանակային ձևերի հետ բազմաբնույթ հարաբերություններում:

Երրորդ գլխում («Հարաբերական ժամանակային ձևերի տիպաբանական յուրահատկությունները գերմաներենում») քննության առարկա են հանդիսանում հարաբերական պլանում տեղ գտած վաղակատար ներկա (Perfekt), վաղակատար անցյալ (Plusquamperfekt), երկրորդ ապառնի (Futurum II) ժամանակային ձևերը գերմաներենում: Առանձին ենթագլուխներում անդրադարձ է կատարվում նշված ժամանակային ձևերից յուրաքանչյուրին իմաստային և գործառական առանձնահատկությունների համալիր ամփոփմամբ:

Երրորդ գլխի առաջին ենթագլխում («Վաղակատար ներկա») քննության են ենթարկվում վաղակատար ներկա ժամանակային ձևի իմաստային և գործառական առանձնահատկությունները, որոնք լիովին բացահայտում են սույն ձևերի հարաբերական բնույթը:

Այն չափանիշը, որ առաջնային է վաղակատարի բնորոշման հարցում, ներկայի վերաբերությունն է, որով այն տարբերվում է անցյալի այլ ժամանակաձևերից: Տվյալ ժամանակային ձևը պահանջված է դառնում այն դեպքում, երբ գոյանում է իրական կախվածություն ներկայի և անցյալի միջև, ինչպես՝

Er hat mich zu sich gebeten, und ich will ihn ehsten Tagen besuchen (Goethe, 12).

Նա խնդրել է այցելել իրեն, և մոտակա օրերին ես կայցելեմ նրան (Գյոթե, 1981:15):

Հարաբերական ժամանակային պլանում վաղակատար ներկա ժամանակային ձևերը դրսևորվում են առավել ընդգրկուն ծավալայնությամբ: Նշված ժամանակային պլանում վաղակատարի (Perfekt) համար առաջնային համարվող ներկայի հատկանիշը բավարար հիմքեր է ստեղծում հիշյալ ձևերի բազմիմաստության համար: Վաղակատար ներկայի ձևերի իմաստաբանական և գործառության առանձնահատկությունների վերլուծությունը կատարվել է ժամանակայնության տեսակետից՝ չանտեսելով, սակայն, սույն ձևերի իմաստային տարր համարվող կերպայնության հատկանիշի դրսևորման հնարավորությունները զուգադրվող լեզուներում:

Հարաբերական ժամանակային պլանում վաղակատարի համար սահմանվել են հետևյալ գործառությունները՝ հետևանքային, նախորդող, տևական, պարբերական, բնութագրական, ընդհանրական, ապառնեական:

Երրորդ գլխի երկրորդ ենթագլուխը («Վաղակատար անցյալ») նվիրված է գերմաներենում վաղակատար անցյալ ժամանակային ձևերի քննությանը: Գերմաներենում վաղակատար անցյալ ժամանակային ձևը հանդես է գալիս որպես բացառապես հարաբերական ժամանակային ձև՝ տեղակայվելով հարաբերական ժամանակային պլանում՝ ըստ նախորդող դրվածքի: Վաղակատար ներկայից այն տարբերվում է նրանով, որ նշում է ավարտված,

կատարված գործողության գաղափար՝ անցյալի մեկ այլ ժամանակակետի հարաբերությամբ: Ի տարբերություն վաղակատար ներկայի՝ սահմանափակ է մաս վաղակատար անցյալի հարաբերական մշանակությունը: Այն ծառայում է հիմնականում անցյալի նախաժամանակյա գործողության արտահայտմանը՝ մշտնապես անցյալի գործողության նախորդող դրվածք՝ մեկ այլ անցյալ ժամանակակետի նկատմամբ, ինչպես՝

Dabei rief sie sich alle seine Worte wieder in den Sinn, die der Bauer an dem Abend gesprochen hatte (Berens-T., 15).

Ընդ որում, նա մտքում վերհիշեց բոլոր այն խոսքերը, որ ասել էր գյուղացին երեկոյան:

Վաղակատար անցյալ ժամանակային ձևերը համապատասխան համատեքստի, բառային և շարահյուսական միջոցների առկայության դեպքում կարող են հանդես գալ տևական, պարբերական, հետևանքի, բնութագրական, նախորդող, պատմողական գործառույթներով:

Վաղակատար բայածների ընդհանուր բնույթին համապատասխան՝ անցյալի վաղակատարը հայերենում ևս արտահայտում է այնպիսի գործողության իմաստ, որին խոսողն ակնատես չի եղել, այլ պատմում է ուրիշ աղբյուրներից ստացած տեղեկությունների հիման վրա կամ դատելով գործողության հետևանքից, արդյունքներից՝ անցյալի մեկ այլ ժամանակակետի հարաբերությամբ:

Երրորդ գլխի երրորդ ենթագլխում («Երկրորդ ապառնի») ամփոփված են երկրորդ ապառնիի իմաստային և գործառական յուրահատկությունները գերմաներենում:

Դիտարկելով այն ժամանակային ոլորտը, որում տեղակայված է երկրորդ ապառնին՝ պարզ է դառնում, որ այն չի մշում ապառնի ժամանակային իմաստ: Նրա հիմնական իմաստը նախորդող ժամանակն է ապագայում կատարվելիք գործողության նկատմամբ: Այդ պատճառով այն բաշխվում է հարաբերական ժամանակային պլանում՝ ըստ նախորդող դրվածքի: Ըստ իմաստային բաղադրիչների վերլուծության՝ այստեղ առկա է գործողության բացառում խոսքի պահից և մեկ այլ, ապագայում կատարվելիք գործողությանը նախորդող վիճակ: Երկրորդ ապառնի ձևերին բնորոշ են այն իմաստային դրսևորումները, որոնք բացահայտվեցին առաջին ապառնիի քննությամբ: Այն տարբերությամբ, որ այս ձևերի մշած իմաստները վերցվում են անցյալի հարաբերությամբ:

Երկրորդ ապառնի ձևերը գործածական են այն դեպքերում, երբ հաղորդվում է սպասված գործողության վերաբերյալ՝ որպես հաստատում, ենթադրություն, կանխատեսում: Հիշյալ ձևերով իրացվում է մաս հետևանքայնության իմաստ, որը բխում է երկրորդ ապառնիի կազմում Infinitiv Perfekt-ի մշանակությունից՝ արտահայտվելով օժանդակ բայ + հարակատար դերբայ կազմությամբ: Այն մաս ենթադրում է գործողության համար հետվիճակի գաղափար, ինչպես, օրինակ՝ *Peter wird eingeschlafen sein. Պետերը պետք է որ*

քնած լինելը. Որպես այս նախադասության հետևանք կամ հետվիճակ ենթադրվում է, որ քնած կլինի նաև մինչև այն պահը, որը հաջորդում է գործողության կատարմանը՝ հանդիսանալով տվյալ գործողության նկատմամբ ապառնի ժամանակ:

Գերմաներենում երկրորդ ապառնին խիստ սահմանափակ գործածություն ունի: Այն շատ դեպքերում փոխարինելի է վաղակատար ներկա (Perfekt) ժամանակային ձևերով, երբ հանդես է գալիս ենթադրության կամ հետևանքային նշանակությամբ նախորդող դրվածքում, ինչպես՝

Wenn du morgen früh ins Büro kommst, bin ich wahrscheinlich schon losgefahren (Boettcher, 53).

Համեմատությամբ հետևում է, որ ապառնիի ուղրտում գերմաներենի և հայերենի ժամանակային համակարգերը հավասարակշիռ չեն: Գերմաներենն այս ժամանակային ուղրտում փաստում է քանակական առավելություն, ինչի պատճառը հայերենի երկրորդ ապառնի ձևի բացակայությունն է, որի ժամանակային իմաստները համապատասխան արտահայտություն են գտնում եղանակային ձևերի և երկրորդական բաղադրյալ ժամանակային ձևերի միջոցով: Ապառնի ժամանակային ձևի եղանակային բնույթն ամեն դեպքում ուղեկցում է ժամանակային իմաստին և այն չի կարող անտեսվել, քանի որ հենց եղանակային իմաստի շնորհիվ են ապառնի ձևերը լեզվում հաճախակի գործածություն գտնում:

Ուսումնասիրության արդյունքները թույլ են տալիս կատարել հետևյալ եզրահանգումները.

1. ժամանակայնության դաշտի միջուկում տեղակայվում են ժամանակային իմաստի արտահայտման քերականական ձևերը: Գերմաներենում ժամանակային հարաբերություններն արտահայտվում են գլխավորապես բայի ձևաբանական կարգի միջոցով: Սահմանական եղանակի ժամանակային ձևերից յուրաքանչյուրի կազմած իմաստագործառական դաշտի միջուկում տեղակայվում են ժամանակային ձևերի առաջնային իմաստները, որոնց շուրջ տարբեր հեռավորությամբ տեղաբաշխվում են նաև դրանց երկրորդային իմաստները:

2. ժամանակայնության իմաստագործառական դաշտն ընդգրկում է նաև ժամանակային լրացումները, որոնց դերում հանդես են գալիս մակբայները, բառային և շարահյուսական միջոցները: Հետևաբար, ժամանակային իմաստի դրսևորումը կարող է իրականացվել ոչ միայն քերականական միջոցներով, այլ նաև այնպիսի բառային, համատեքստային միջոցներով, որոնք տեղակայվում են իմաստագործառական դաշտի եզրային դիրքերում:

3. ժամանակայնության տեսակետից մեծ կարևորություն են ներկայացնում ժամանակային շաղկապները, որոնք թույլ են տալիս սահմանել այն ժամանակային հարաբերությունները, որոնք իրացվում են բարդ նախադա-

սուբյան ծավալման մեջ: Գերմաներենում ժամանակային շաղկապները ծառայում են ժամանակային բարդ փոխհարաբերությունների արտահայտմանը: Ժամանակային շաղկապները ևս ենթակա են դասակարգման: Այդպիսի դասակարգման համար հիմք են ծառայում նախաժամանակայնությունը, միաժամանակայնությունը, հետժամանակայնությունը, ժամանակային տևակա-նությունը, ժամանակային հաջորդականությունը, պատճառահետևանքային հարաբերությունները: Այս շաղկապների միջոցով ստեղծվում են ժամանակային դրվածքներ ժամանակային առանցքի նկատմամբ:

4. Գերմաներենում ժամանակային ձևերը, հանդես գալով բացարձակ և հարաբերական ժամանակային պլաններում, բաժանվում են երկու խմբերի: Ժամանակային համակարգի դասակարգման այսպիսի կաղապարն առավել ընդունելի է այն հիմնավորմամբ, որ այն թույլ է տալիս լիովին բացահայտել ժամանակային ձևերի իրական բնույթը և այն հարաբերությունները, որոնցով պայմանավորված են ժամանակային համակարգի ամբողջականությունը և ներքին կառուցվածքը գերմաներենում: Ժամանակային ձևերի ուսումնասիրությունն ըստ Յու. Գաբրիելյանի դրվածքային և ժամանակաձևային դասակարգման՝ հնարավորություն է տալիս իրականացնել առանձին ժամանակային ձևերի խորքային քննություն՝ խստագույնս պահպանելով յուրաքանչյուր ժամանակաձևի տեղը ժամանակային համակարգում:

5. Գերմաներենում ժամանակային ձևերի իրացումը՝ այս կամ այն կերպային հատկանիշի առնչությամբ, լիովին կախվածության մեջ է գտնվում համատեքստից, բառային և շարահյուսական միջոցների ազդեցությունից, ինչպես նաև՝ բայիմաստից: Գերմաներենում կերպավորության կարգն ընդգրկում է բառային - բառակազմական, ձևաբանական և շարահյուսական մակարդակները: Ինչպես համեմատությամբ պարզ դարձավ, հայերենում ժամանակային ձևերն այս տեսակետից համեմատաբար ավելի անկախ են:

6. Ժամանակի քերականական կարգն առնչության եզրեր ունի տևակա-նության, պարբերականության հետ, որոնք գերմաներենում արտահայտման հատուկ կաղապարներ չունեն: Տևականությունը դրսևորվում է որպես գործողությունների հատկանիշ, որն սկիզբ է առնում հաշվարկման կենտրոնից և ընդգրկում ժամանակի որոշակի հատվածներ: Տևականության դեպքում գործողությունները չեն նշում սահմանափակում ժամանակի որևէ կետի միջոցով: Մինչդեռ պարբերականությունը ենթադրում է ժամանակի տևողության ընդհատում, տրոհում, ընդմիջում:

7. Սահմանական եղանակի ներկա ժամանակի բայաձևերի մեջ իրացվող ներկայի բնույթն առավել ընդգրկում է: Այն շատ դեպքերում վերացարկվում է խոսքի պահից՝ ներկայի ձևերի համար հիմնական հաշվարկման առանցքից: Սույն ձևերը հաճախ հանդես են գալիս իրենց համար ոչ հատկանշական իմաստային գործառույթներով: Ընդ որում, առանց համատեքստային ղեկավարման ներկան չի կարող այդպիսի գործառույթներով հանդես գալ: Գերմաներենի ներ-

կա (Präsens) ժամանակաձևը թարգմանական տեսակետից բարդություններ չի հարուցում:

8. Առաջին ապառնի ժամանակաձևը հանդես է գալիս որպես ապառնի իմաստի հաղորդման հարացուցային հիմնական ժամանակային ձև, որը յուրաքանչյուր չեզոք համատեքստում կամ համատեքստից դուրս արտահայտում է խոսքի պահից հետո ընկած գործողության, եղելության իմաստ: Հիշյալ ձևերը գերմաներենում հանդես են գալիս երկակի բնույթով՝ ժամանակային և եղանակային: Դա հաստատվում է ապառնի ձևերում եղանակային տարրերի առկայությամբ: Ապառնիի բնորոշման հարցում անհրաժեշտ ենք համարում չտարբերակել երկու առանձին նշանակություններ՝ իրենց կիրառության տարբեր ոլորտներով, քանի որ երկու նշանակությունները միասին կազմում են տվյալ ժամանակային ձևի բնույթը, ներքին կառուցվածքը:

9. Präteritum ժամանակային ձևը գերմաներենում անցյալի վերարտադրման հիմնական ձևն է: Präteritum ժամանակային ձևով գերմաներենում արտահայտվում է անցյալի գործողություն առանց որևէ այլ ժամանակակետի հարաբերության: Այն վերցվում է բացառապես որպես անցյալի գործողություն խոսքի պահի հարաբերությամբ, ինչն էլ թույլ է տալիս սահմանել Präteritum-ի բացարձակ ժամանակային իմաստը՝ ըստ նախորդող դրվածքի: Գերմաներենի Präteritum ժամանակային ձևերը հանդես են գալիս որպես հայերենում երկու ժամանակային ձևերի համարժեք: Գերմաներենում, ի տարբերություն հայերենի, այս ձևերը չեն ստեղծում ոչ՝ ժամանակային, ոչ՝ էլ կերպային հակադրություն: Եթե հայերենը հիշյալ իմաստների համար անցյալի այս ոլորտում տեղակայում է արտահայտման առանձին կաղապարներ, ապա գերմաներենը չի տիրապետում այդպիսի քերականական ձևերի: Յետևաբար, գերմաներենում Präteritum ժամանակային ձևերի ժամանակային և կերպային դրսևորումների ողջ ծանրությունը կրում են համատեքստը և բառային միջոցները: Պայմանավորված հիշյալ ձևերի իմաստային և գործառական առանձնահատկություններով՝ առաջանում են մի շարք թարգմանաբանական խնդիրներ:

10. Բացարձակ իրացմամբ վաղակատար ներկա ժամանակային ձևերը գերմաներենում հանդես են գալիս որպես Präteritum-ի հոմանիշ: Այսպիսի գործառությամբ, սակայն, վաղակատարը (Perfekt) հանդես է գալիս զուտ բացարձակ պլանում: Այս ժամանակային պլանում վաղակատարի (Perfekt) և անցյալ կատարյալի (Präteritum) հիմքում ընկած է լուրջ տարբերակիչ հատկանիշ, որը վճռական է այդ ձևերի տարբերակման հարցում: Այդ տարբերակիչ հատկանիշը ներկայի իմաստն է: Այսինքն՝ խոսողը միշտ ի նկատի ունի ներկան, որից առաջ գործողությունը թեպետ կատարված, վերջացած է, բայց տվյալ գործողության հետևանքը կարող է հարատևել մինչև ներկա ժամանակակետը, մինչև խոսքի պահը:

11. Գերմաներենում վաղակատար անցյալ (Plusquamperfekt) ժամանակային ձևերը հանդես են գալիս բացառապես հարաբերական գործառնությով: Հիշյալ ձևերը հարաբերական ժամանակային պլանում արտահայտում են այնպիսի իմաստային դրսևորումներ, որոնք նշում են տևականության, նկարագրականության, պարբերականության, պատմողական, նախորդող, պայմանի իմաստներ՝ վերցված անցյալի մեկ այլ կետի հարաբերությամբ, որոնց հաղորդումը իրացվում է վաղակատար անցյալ ժամանակային ձևերի բազմիմաստության շնորհիվ:

12. Երկրորդ ապառնի ժամանակային ձևը, բաղադրվելով *werden* օժանդակ բայով և Infinitiv II-ով, հանդես է գալիս ապագայում կատարվելիք գործողության նկատմամբ նախորդող իմաստով: Առաջին ապառնիի նկատմամբ այն գտնվում է նույն հարաբերության մեջ, ինչպես հարաբերական վաղակատար ներկան՝ ներկայի, վաղակատար անցյալը՝ անցյալ կատարյալի հետ: Ըստ իմաստային բաղադրիչների վերլուծության՝ այստեղ ունենք գործողության բացառում խոսքի պահից և մեկ այլ, ապագայում կատարվելիք գործողությանը նախորդող վիճակ: Երկրորդ ապառնի ձևերի համար կարևոր բաղադրիչ է համարվում կանխադրույթը, ինչը պայմանավորված է առաջին ապառնիի հետ նրա կապով:

13. Գերմաներենում ժամանակային ձևերը հաճախ հանդես են գալիս որպես շարահյուսական հոմանիշներ, ինչը լիովին կախված է նրանց դիրքից ժամանակային առանցքի նկատմամբ, որոնց իրացման համար հիմք են ծառայում ժամանակային ձևերի բազմիմաստությունը և հոմանիշությունը: Սակայն այսպիսի հոմանիշային կիրառության հնարավորությունները սահմանափակ են, և ոչ միշտ է հնարավոր ժամանակային ձևերի փոխադարձ կիրառությունը: Որոշակի դեպքերում այսպիսի հոմանիշային հարաբերություններ են գործում նաև հայերեն համարժեք ձևերի միջև, ինչն էլ հնարավորություն է տալիս լուծել մի շարք տեսական, գործնական և թարգմանական խնդիրներ:

14. Ժամանակային իմաստի իրացման համար գերմաներենը նշում է քերականական արտահայտման այնպիսի ձևեր, միջոցներ, որոնք կազմում են տվյալ լեզվի ժամանակի կարգը: Գերմաներենում ժամանակային ձևերը հիմնականում վերլուծական են՝ բացառությամբ ներկայի և անցյալ կատարյալի (Präteritum): Հայերենի հետ համեմատությամբ պարզ է դառնում, որ այստեղ նույնպես ժամանակային ձևերը հիմնականում վերլուծական կառուցվածքի են՝ բացառությամբ միայն անցյալ կատարյալի: Ընդ որում, գերմաներենում ժամանակային ձևերի կազմած շրջանակային կառույցները հանդես են գալիս խիստ շարադասությամբ, ինչը ենթադրում է բաղադրիչների հստակ սահմանված դիրքը նախադասության կազմում: Նույնը չի կարելի ասել նաև հայերենի համար: Այստեղ նախադասության շարադասությունը համեմատաբար ազատ է:

Հետազոտության հիմնադրույթներն արտացոլված են հետևյալ հրապարակումներում՝

1. Կերպաժամանակային փոխհարաբերության տիպաբանական բնութագիրը գերմաներենում // Գիտական աշխատություններ, N 12, ՀՀ ԳԱԱ Հայագիտական հետազոտությունների կենտրոն, Երևան, Գիտություն հրատ., 2009, էջ 48-51:
2. Ներկայի ձևերի ժամանակակերպային իրացումները գերմաներենում և հայերենում // Օտար լեզուները բարձրագույն դպրոցում, N 14, Երևան, ԵՊՀ հրատ., 2013, էջ 143-149:
3. Վաղակատար ներկա ժամանակային ձևի տիպաբանական յուրահատկությունները գերմաներենում // Օտար լեզուները բարձրագույն դպրոցում, N 15, Երևան, ԵՊՀ հրատ., 2013, էջ 152-162:
4. Առաջին և երկրորդ ապառնի ձևերի տիպաբանական առանձնահատկությունները գերմաներենում // ԳՊՄԻ գիտական տեղեկագիր, ՊՐԱԿ Բ, N 2, Գյումրի, 2013, էջ 46-52:

ТЕР - АДАМЯН ШУШАНИК ВОЛОДЯЕВНА

**ТИПОЛОГИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ГРАММАТИЧЕСКОЙ
КАТЕГОРИИ ВРЕМЕНИ В СОВРЕМЕННОМ НЕМЕЦКОМ
ЯЗЫКЕ**

**Диссертация на соискание ученой степени
кандидата филологических наук
по специальности 10.02.07 “Германские языки”**

**Защита состоится 10 сентября, 2014 г. в 12:30 на заседании
специализированного совета 009- “Иностранные языки” ВАК РА при
Ереванском государственном университете**

РЕЗЮМЕ

Реферируемая диссертационная работа посвящена исследованию типологических особенностей категории времени в немецком языке, которая является одной из ключевых вопросов современных лингвистических исследований.

Актуальность темы обуславливается необходимостью детального анализа категории времени и временных форм с позиции типологии немецкого языка, в некоторых случаях сопоставляя их с релевантными фактами армянского языка. Благодаря сопоставительному анализу можно выделить некоторые особенности сопоставляемых языков, которые иначе не проявляются.

Целью данного исследования является анализ категории времени, временных форм в немецком, исходя из новых теорий и принципов современной германистики и частной типологии.

Поставленная цель определяет задачи исследования:

- Всесторонний анализ основных теорий сущности категории времени в германистике, а так же частично в армянском языке;
- исследование временных форм, различных семантических проявлений данных форм в соответствующих структурах;

- распределение временных форм в временных планах в немецком;
- выявление типологических особенностей временных форм в немецком языке, с учетом семантических и функциональных сходств и различий с армянским;
- разъяснение функциональных особенностей временных форм немецкого языка;
- определение средств, влияющих на способы выражения временных значений; контекст, словарные и синтаксические средства.

Исследование базируется на методах описательного, сравнительного, сопоставительного, контекстного и структурного анализов.

Научная **новизна** работы заключается в том, что в ней впервые предпринимается попытка на основе существующих типологических исследований провести комплексное изучение временных форм в немецком на основе классификации временных форм, предлагаемой Ю. Габриеляном.

Теоретическая значимость работы состоит в том, что результаты исследования и теоретические положения работы могут способствовать прояснению многих вопросов, связанных с категорией времени, изучению типологических особенностей временных форм в немецком и армянском языках.

Практическая ценность диссертации заключается в том, что результаты исследования могут использоваться в практике преподавания немецкого языка, в сопоставительной типологии немецкого и армянского языков, в практике перевода, в преподавании соответствующих разделов практической и теоретической грамматики немецкого и армянского.

Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка использованной научной и художественной литературы, словарей и примечаний.

Во **введении** обоснован выбор темы, ее актуальность и научная новизна, теоретическая значимость и практическая ценность, определены объект и предмет исследования, цель, задачи и методы исследования.

В **первой главе** рассматриваются теоретические проблемы категории времени в общем языкознании и в германистике, распределение временных форм в временных планах в немецком языке. Рассматриваются основные типологические особенности временных форм, характерных армянскому языку, уточняются терминология и методика исследования.

Во второй главе проводится исследование типологических особенностей абсолютных временных форм (Präsens, Futurum I, Präteritum, Perfekt), выявляются сходства и различия средств выражения временных значений в немецком и армянском языках.

Третья глава посвящена изучению типологических особенностей относительных временных форм в немецком (Perfekt, Plusquamperfekt, Futurum II) в сопоставлении с соответствующими формами армянского языка.

В заключении подводятся итоги проведенного исследования.

TER - ADAMYAN SHUSHANIK

**THE TYPOLOGICAL PECULIARITIES OF THE
GRAMMATICAL CATEGORY OF TENSE IN MODERN
GERMAN**

SUMMARY

The object of the present paper is the typological peculiarities of the category of tense in German.

The research is aimed at analyzing the system of the category of tense in German as a whole from the functional and semantic perspectives applying the typological principles. The typological peculiarities of the category of tense are revealed with intralingual regularities and corresponding facts of the Armenian language.

The following objectives are set forth to achieve the goal of the research: 1. to describe the theories and approaches revealing the nature of the category of tense in German and Armenian; 2. to investigate the tense forms as well as different semantic realizations of the given forms in the studied languages; 3. to present the place of the tense forms in the plane of time in German; 4. to determine the typological peculiarities of the tense forms in German taking into account the semantic and functional similarities and differences with the Armenian language; 5. to explain the functional peculiarities of the tense forms in German; 6. to analyze the contextual conditions of the realization of the meaning of tense forms.

The theme of this study is considered **topical** as at the present stage of the development of linguistics the typological theories of languages are of paramount importance, many peculiarities are revealed exclusively by comparative analysis. The contrastive analysis reveals the essence of the category of tense in German more effectively. So the **novelty** of the research is preconditioned by this fact. The contextual conditions of the realization of the category of tense, as well as its overall contrastive analysis with the Armenian language is examined for the first time.

The paper consists of an introduction, three chapters, conclusion, bibliography and notes.

The introduction presents the goal of the thesis and its objectives, the topical issues and novelty, the practical and theoretical values of the research and the structure of the paper.

Chapter One presents different aspects studying the essence of the category of tense in general linguistics and in German. The typological peculiarities of the category of tense of the Armenian language are also examined here.

Chapter Two is devoted to the investigation of typological peculiarities of absolute tense forms in German, as well as to the revelation of semantic and functional similarities and differences with the Armenian language.

Chapter Three examines the typological peculiarities of referential forms in German including the corresponding facts of Armenian.

The results of the research are presented in the conclusion.